ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ոստան համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Ոստան համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 31-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

2. Ոստան համայնքի 13.12.2016թ. թիվ 33 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՎ
5. ԽԱՆԳԵԼԴՅԱՆ ՆԱՐԻՆԵ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
7. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20__ թ. _____
գ._____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 13.12.2016Թ. ԹԻՎ 31 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածների պահանջներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Սահմանել Արարատի մարզի Ոստան համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ոստան համայնքի ավագանու 13.12.2016թ. ,,Ոստան համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին,, թիվ 31-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ
5. ԽԱՆԳԵԼԴՅԱՆ ՆԱՐԻՆԵ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
7. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ._____ ___
գ._____

Հավելված 1
Ոստան համայնքի ավագանու
30-ը հունվարի 2017թ.
թիվ 5-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 750 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000 դրամ.

6/ համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.900 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.500 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.900 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 դրամ,

- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30.000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250.000 դրամ.

դ. խաղատների համար՝ 500.000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250.000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 50.000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 1000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

օբյեկտի համար՝ 12.000 դրամ.

10) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համա յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

11) Ոստան համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000 դրամ.

- 12) համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5.000 դրամ.

Սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ: Իսկ 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 1.000 դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

3) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ.

4) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության

վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

ա. յուրաքանչյուր բնակչի համար 50 դրամ.

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500 դրամ, կամ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ:

5) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016Թ. ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքի ավագանու 13.12.2016թ. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին,, թիվ 33 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

,,7. Խոհարարի օգնական 73000 դրամ,,

բառերի փոխարեն կարդալ

,,7. Խոհարարի օգնական 78000 դրամ,,:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ
5. ԽԱՆԳԵԼԴՅԱՆ ՆԱՐԻՆԵ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
7. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ._____